

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2014թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցած

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի

խորհրդի N1 նիստի

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 16 անդամներից 14-ը:

Օրակարգ:

1. Ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. Ֆակուլտետի ուսումնական պրոցեսի իրականացման ժամանակացույցն ըստ կուրսերի:
3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին՝** Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի կազմում, քննարկում /հաղ. Ա.Գրիգորյան /

Արտահայտվեցին՝ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը , կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը:

Որոշեցին՝ 2014-2015 ուստարվա ֆակուլտետում իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը

1. Դեկտեմբեր ամսին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների «Հույս» մանկատան այցելության կազմակերպում:
2. Ամանորին նվիրված միջոցառման կազմակերպում:
3. Մայիսին թանգարանային միջազգային օր՝ միջոցառում « Թանգարանային գիշեր» թեմայով:
4. Հունիսին քիմիայի միջազգային օր՝ միջոցառում «Ալ քիմիկոսներ » թեմայով:

Լսեցին՝ Ա.Գրիգորյանին Ֆակուլտետի ուսումնական պրոցեսի իրականացման ժամանակացույցն ըստ կուրսերի: Տեղեկացվեց, որ 2014-2015 ուստարվա առկա ուսուցման

1-ին կիսամյակի դասատախտակը արդեն պատրաստ է :

Առաջարկվեց Ֆակուլտետի լսարանային խնդիրը լուծել առանց ամբիոններում դաս դնելու:

Որոշեցին՝ Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատման:

Նախագահ՝

Ա.Գրիգորյան

Քարտուղար՝

Հ.Եղիկյան

29.08.2014թ.